Գործադիր օրինակ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՄ. 6

Հայաստանի Հանրապետության և

Ամերիկայի Միացյալ Նահանգների

միջև՝

Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման

զարգացմանն ուղղված

Համագործակցության համաձայնագրի

Հունվարի 23, 2018 թ.

ԱՄՆ ՄԶԳ՝ Զարգացմանն ուղղված Համագործակցության համաձայնագիր
հմ. AAG-111-G-13-001

Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի (այսուհետև՝ Դրամաշնորհառու) և Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև՝ Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված՝ 2013 թվականի սեպտեմբերի 28-ով թվագրված Համագործակցության համաձայնագրի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ հմ. 6:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2013 թվականի սեպտեմբերի 28-ին Դրամաշնորհառուն և ԱՄՆ ՄԶԳ-ն Զարգացմանն ուղղված Համագործակցության համաձայնագիր են կնքել՝ աջակցելու համար առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանը, ինչպես նկարագրված է Համաձայնագրի 1-ին հավելվածում (Մանրամասն նկարագիր), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Դրամաշնորհառուն և ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկանում են փոփոխություն կատարել Համաձայնագրում՝

1) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ կողմից ընդհանուր հատկացված գումարի չափը 21,181,128.00 դոլարից մինչև 26,528,193.00 դոլար՝ այդպիսով տրամադրելով 5,347,065.00 դոլար լրացուցիչ ֆինանսավորում, և

2) ավելացնելու համար Դրամաշնորհառուի ներդրումը 3,056,667 դոլարից մինչև 3,538,593 դոլար:

ԱՅՍՊԻՍՈՎ՝ Կողմերը համաձայնում են Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Համաձայնագրի բաժին 3.1.ա-ն՝ «ԱՄՆ ՄԶԳ ներդրումը», ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

   «ա) Դրամաշնորհը: Սույն Համաձայնագրով սահմանված Նպատակի իրականացմանն օժանդակելու համար ԱՄՆ ՄԶԳ-ն, Օտարերկրյա օժանդակության մասին 1961 թվականի որոշման (փոփոխություններով) համաձայն, սույնով Դրամաշնորհառուին է հատկացնում, Համաձայնագրի պայմաններին համապատասխան, քսանվեց միլիոն հինգ հարյուր քսանութ հազար հարյուր իննսուներեք Միացյալ Նահանգների (ԱՄՆ) դոլարը (26,528,193.00, $) չգերազանցող գումար (Դրամաշնորհ):»:

2. Համաձայնագրի բաժին 3.2 (բ)-ն՝ «Դրամաշնորհառուի ներդրումը», ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

   «բ) ԱՄՆ ՄԶԳ՝ 3.1(ա) բաժնում նախատեսված ներդրման վրա հիմնված Դրամաշնորհառուի ներդրումը պակաս չի լինի երեք միլիոն հինգ հարուր երեսուութ հազար հինգ հարյուր իննսուներեք (3,538,593 $) ԱՄՆ դոլարին համարժեք գումարից՝ բաղկացած լինելով ընթացիկ բյուջեի միջոցներից տրամադրվող՝ բնաիրային կամ դրամական ներդրումներից: Եթե ԱՄՆ ՄԶԳ-ն աճողական կարգով փոփոխում է 3.1(ա) բաժնում սահմանված Դրամաշնորհի գումարը, ինչպես նախատեսված է սույն փաստաթղթում, ապա Դրամաշնորհառուի ներդրումը յուրաքանչյուր աճողական մասնաբաժնի հետ համապատասխանաբար ավելանում է այնպես, որ Դրամաշնորհառուի ներդրումը պակաս չլինի Դրամաշնորհի գումարի այն մասի մեկ երրորդից, որն օգտագործվում է այն աշխատանքներին աջակցման համար, որոնցով կա՛մ ուղղակիորեն զգալի օգուտ է ապահովվում Հայաստանի Կառավարություն համար, կա՛մ նախատեսվում է Հայաստանի Կառավարության՝ ուղղակի կամ էական ներգրավվածությունն այդ օժանդակության վարչարարության, վերահսկողության կամ կառավարման հարցում: Դրամաշնորհառուի ներդրման ճշգրիտ գումարը նշվում է աճողական յուրաքանչյուր ներդրման վերաբերյալ ԱՄՆ ՄԶԳ գրավոր ծանուցման մեջ: Այն դեպքում, երբ ԱՄՆ ՄԶԳ-ն նվազեցնում է 3.1(ա) հոդվածում նշված դրամաշնորհի գումարը՝ 3.1(գ) հոդվածին համապատասխան, ապա Դրամաշնորհառուի ներդրումը համապատասխանաբար նվազեցվում է սույն փաստաթղթում ներկայացված հաշվարկի համաձայն, և այդ նվազեցումներն արձանագրվում են ԱՄՆ ՄԶԳ իրականացման մասին նամակներով: Նպատակի իրագործումն ապահովելու համար Դրամաշնորհառուի կողմից նախատեսվող հանրագումարային ներդրումը կախված է Դրամաշնորհառուի համար այս նպատակի համար բյուջեով նախատեսված միջոցների առկայությունից և ԱՄՆ ՄԶԳ համար՝ 3.1(բ) բաժնում նշված ընդհանուր հաշվարկված գումարի հատկացման համար անհրաժեշտ միջոցների առկայությունից: Դրամաշնորհառուն առնվազն

տարեկան կտրվածքով հաշվետվություն կներկայացնի իր դրամական և բնաիրային ներդրումների վերաբերյալ՝ ԱՄՆ ՄԶԳ հետ համաձայնեցված ձևաչափով:»:

3. 1-ին հավելվածի Ա առդիրը՝ «Ֆինանսական պլան», ամբողջությամբ հանվում է և փոխարինվում հետևյալով.

| Նպատակը | Ծրագրի ոլորտը | Նախորդ հատկացումը | Տվյալ փոփոխությունը | Ընդհանուր հատկացումը |
|---|---|---|---|---|
| Արդար և ժողովրդավարական կառավարում | Օրենքի գերակայություն և մարդու իրավունքներ | 800,000 | - | 800,000 |
| | Պատշաճ կառավարում | 11,637,529 | 2,310,000 | 13,947,529 |
| | Քաղաքացիական հասարակություն | 8,463,599 | 3,037,065 | 11,500,664 |
| Ծրագրի մշակման և ծրագրի վարչական ծախսերը | Վարչարարություն և վերահսկում | 280,000 | - | 280,000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 21,181,128 | 5,347,065 | 26,528,193 |

4. Բացառությամբ սույն փաստաթղթում նշվածի՝ Համաձայնագրի մյուս բոլոր պայմանները մնում են անփոփոխ, ուժի մեջ են և վավերական:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ Հայաստանի Հանրապետությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները, յուրաքանչյուրը գործելով պատշաճ կերպով լիազորված իր ներկայացուցչի միջոցով, ապահովել են իրենց անունից սույն հմ. 6 Փոփոխության ստորագրումն ու հանձնումը ստորև նշված ամսաթվին և թվականին:

| | |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից՝ |
| Անուն՝ Վահե Ստեփանյան | Անուն՝ Դեբորահ Գրիզեր |
| Պաշտոն՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար | Պաշտոն՝ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստանի գրասենյակի ղեկավար |
| Ամսաթիվ՝ 23.01.2018 | Ամսաթիվ՝ 23 Jan 2018 |

Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև՝ Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված Համագործակցության համաձայնագրի Փոփոխություն հմ. 6